

198 Որ եւ յաւուր միում յայտնեալ
Սարգսի մերոյ զՊատուէրն առեալ՝
Մաղթէր ընեա զի հաճեցեալ
Յանձն առնացու զայն պաշտօն փայլ :

199 Իսկ Սարգիս մեր մեծ գոհութեամբ
Հըրաժարիւր անկեղծութեամբ
Յառնելոյ եւս իւր ծերութեամբ
Զայն գործ՝ որ էր լի աշխատմամբ :

200 Յետ մի տարւոյ Սարգիս տեսեալ
Զանկարդութիւն ինչ արարեալ
Ի յերիցանց անդէն եղեալ
Սաստէր նոցա յոյժ նախատեալ :

1772

201 Որոց փորձեալ ըզսաստ նոցին ,
Հաճեալ զոմանս նոյն ամբօխին՝
Գանկատ գրրեն Պատրիարգին
Վասն արարմանց մեր Սարգըսին :

202 Եւ լ Վրբիգոր քաջ Պատրիարգ
Քննեալ նոցուն զարարս անկարգ՝
Տալով նոցա նախատ է՝ անարգ
Հարկէր զՆոսա տալ Սարգսի յարգ :

203 Որոց եղեալ ամօթալի
Պատառոտեալ զթուղթ գանկատի՝
Մեղայ գոչմամբ ի յատենի
Կարօտ լինին ներման Սարգսի :

204 Եպայ Սարգիս չեղեալ անփոյթ ,
Սակս ունելոյ անձին իւր գութ՝
Խօկայր ունիլ ղերթալոյ փոյթ
Քրիստոնէից յաշխարհ անբոյթ :